ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՊՐՈԲԱՑԻԱՅԻՆ ազգային ցանցի

հիմնադիր համաժողովի 19 հուլիսի 2018 թվականի թիվ 2 որոշմամբ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՊՐՈԲԱՑԻԱՅԻՆ Ազգային ցանցի նախագահ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՊՐՈԲԱՑԻԱԻՆ ԱԶԳԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԵՎ ՑԱՆՑԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՍՏԵՂԾՎԱԾ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ

ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ

ք. Երևան, 2018թ.

1. Սույն կանոնները կոչված են սահմանելու Աջակցություն պրոբացիային Ազգային ցանցի անդամների և Ցանցի հիման վրա ստեղծված դիտորդական մարմինների վարքագծի միասնական չափորոշիչները և էթիկայի նորմերը:

2. Հիմնական հասկացությունները՝

ա) Ցանց՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների Աջակցություն Պրոբացիային ազգային ցանց

բ) Դիտորդական մարմին՝ Ցանցի կառավարման խորհրդի կողմից ձևավորված մշտական և/կամ ժամանակավոր դիտորդական առաքելություն իրականացնող խումբ (խմբեր)

գ) Դիտորդական մարմնի անդամ՝ Ցանցի կառավարման խորհրդի կողմից ձևավորված մշտական և/կամ ժամանակավոր դիտորդական խմբերում դիտորդական առաքելություն իրականացնող Ցանցի անդամի ներկայացուցիչ

դ) Կառավարման խորհուրդ՝ Ցանցի ղեկավար մարմին

I. ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

3. ՀԱՐԳԱՆՔ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

3.1 Ցանցն իր գործունեության ընթացքում պետք է

ա) զերծ մնա նախապաշարմունքային վերաբերմունքից՝ ազգային, ռասայական, կրոնական, սեռական, տարիքային, ֆիզիկական և/կամ մտավոր արատների, սոցիալական կարգավիճակի հիմքով

բ) զերծմնա որևէ հիմքով անհանդուրժողականություն քարոզելուց

գ) բացառի որևէ հիմքով խտրական վերաբերմունքը

դ) բացառի ատելության խոսքը

4. ՀԱՐԳԱՆՔ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

4.1 Ցանցի անդամը պարտավոր է

ա) հավատարիմ լինել մարդու իրավունքների հիմնարար արժեքներին, մասնավորապես հարգել անձի՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը, այդ թվում՝ նամակագրության, անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության, բնակարանի և այլ սեփականության անձեռնմխելիության սկզբունքները

բ) հավատարիմ լինել անմեղության կանխավարկածի սկզբունքին, արդար դատաքննության իրավունքի պահպանմանը

գ) չչարաշահել անձանց դյուրահավատությունը և վստահությունը

դ) առանձնահատուկ նրբանկատություն դրսևորել, եթե աշխատում են անչափահասների և երեխաների հետ

ե) անչափահասների վերաբերյալ տեղեկատվություն, տվյալներ հավաքագրելուց առաջ անչափահասին հասկանալի/մատչելի լեզվով բացատրել տեղեկատվության անհրաժեշտությունը և ստանալ նրա և նրա համար պատասխանատու անձի համաձայնությունը՝ ցանկալի է գրավոր: Համաձայնությունը պետք է լինի կամավոր և բացառվի պարտադրանքի որևէ ձև: Անչափահասի հետ զրուցելիս փորձել հնարավորինս խուսափել նրան հոգեկան տառապանք պատճառելուց՝ պայմանավորված ինչ-որ տեղեկություններ ստանալու անհրաժեշտությամբ:

5. ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ

5.1 Ցանցը և Ցանցի հիման վրա ստեղծված դիտորդական մարմիններն իրենց գործունեության ընթացքում առաջնորդվում են ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ օրենսդրությամբ, Ցանցի կանոնադրությամբ և սույն էթիկայի կանոններով:

5.2 Ցանցը և Ցանցի հիման վրա ստեղծված դիտորդական մարմիններն իրենց պարտականություններն իրականացնելիս պետք է անկախ լինեն, չհետապնդեն անձնական և/կամ որևէ պետական, քաղաքական և այլ շահ, ինչը կարող է կաշկանդել ցանցի անդամին իր գործունեության մեջ:

5.3 Ցանցը և Ցանցի հիման վրա ստեղծված դիտորդական մարմինները պետք է հրաժարվեն իրենց գործունեությամբ պայմանավորված իրենց առաջարկվող պարգևատրումներից, նվերներից, արտոնություններից, որոնք կախյալ են դարձնում նրանց, բացասաբար անդրադառնում Ցանցի անդամների, Ցանցի կառավարման խորհուրդի և Ցանցի քարտուղարության հեղինակության վրա, ինչը կարող է հանգեցնել Ցանցը և Ցանցի հիման վրա ստեղծված դիտորդական մարմինների նկատմամբ վստահության կորստի:

6. ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

6.1 Ցանցը և Ցանցի հիման վրա ստեղծված դիտորդական մարմինները պետք է խուսափեն շահերի բախման իրավիճակում հայտնվելուց: Շահերի բախում կարող է առաջանալ այն դեպքում, եթե անդամն ունի անձնական շահագրգռվածություն, ինչը կարող է խաչընդոտել նրա պարտականությունների պատշաճ կատարմանը: Շահերի բախում առաջանալու դեպքում անդամը պարտավորվում է դրա մասին անհապաղ տեղեկացնել Էթիկայի հանձնաժողովին: Էթիկայի հանձնաժողովը պարտավորվում է անհրաժեշտ միջոցներ ձեռնակել՝ շահերի բախումը վերացնելու ողղությամբ:

7. ԱՆԱՉԱՌՈՒԹՅՈՒՆ

7.1 Ցանցը և Ցանցի հիման վրա ստեղծված դիտորդական մարմինները պարտավոր են չկոծկել և/կամ չխեղաթյուրել փաստերը, իրենց հաշվետվություններում չներառել ակնհայտ կեղծ տեղեկություններ:

7.2 Ցանցը և Ցանցի հիման վրա ստեղծված դիտորդական մարմինները պետք է հարգալից վերաբերմունք դրսևորեն Քրեակատարողական ծառայության,Պրոբացիայի ծառայության, դատարանների և բոլոր այն մարմինների և անձանց նկատմամբ, որոնց հետ առնչվելու են իրենց պարտականություններն իրականացնելիս:

8. ԲԱՐԵԽՂՃՈՒԹՅՈՒՆ

8.1 Իրենց պարտականությունները կատարելիս Ցանցը Ցանցը և Ցանցի հիման վրա ստեղծված դիտորդական մարմինները պետք է նպաստեն Ցանցի նկատմամբ վստահության և հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

8.2 Ցանցը և Ցանցի հիման վրա ստեղծված դիտորդական մարմինները պարտավորվում են բարեխղճորեն կատարել իրենց պարտականությունները և զերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են կասկածի տակ դնել նրանց և Ցանցի հեղինակությունը, անաչառությունը, ազնվությունն ու անկախությունը:

9. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

9.1 Ցանցը և Ցանցի հիման վրա ստեղծված դիտորդական մարմիններն իրենց պարտականությունները կատարելիս կարող են անձնական կյանքին վերաբերող տեղեկություններ ստանալ, որոնք պարտավորվում են որևէ պարագայում չբացահայտել երրորդ անձանց: Ցանցը և Ցանցի հիման վրա ստեղծված դիտորդական մարմնի անդամների գործունեության արդյունքում ստացված անձնական բնույթի տվյալները կարող են հրապարակվել բացառապես շահառուի համաձայնությամբ:

9.2 Ցպնցը և Ցանցի հիման վրա ստեղծված դիտորդական մարմինները պատկան մարմինների հետ զրույցում հնարավորինս պետք է խուսափեն անձնական կյանքին վերաբերող տեղեկատվություն հայտնելուց, զգույշ լինեն եզրակացություններ ձևակերպելիս:

9.3 Ցանցը և Ցանցի հիման վրա ստեղծված դիտորդական մարմիններին արգելվում է հրապարակել կամ ոչ աշխատանքային նպատակով և/կամ իրենց անձնական շահերի համար օգտագործել իրենց պարտականությունները կատարելիս իրենց հայտնի դարձած տեղեկատվությունը կամ տեղեկատվական կրիչները (փաստաթղթեր, տեսա-ձայնասկավառակներ, ֆոտոներ և այլն):

9.4 Գաղտնիության սկզբունքը չունի ժամանակային սահմանափակում: Ցանցը և Ցանցի հիման վրա ստեղծված դիտորդական մարմինները պարտավորվում են դիտորդությունն ավարտելուց հետո չօգտագործել իրենց պարտականությունները կատարելիս իրենց հայտնի դարձած տեղեկատվությունը:

9.5 Տեղեկատվության բացահայտումը թույլատրելի է բացառապես Օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում:

10. ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

10.1 Թափանցիկությունն ապահովվում է հասարակությանը Ցանցի գործունեության, ինչպես նաև Քրեակատարողական ծառայության, Պրոբացիայի ծառայության և դատարանների աշխատանքների մասին հաշվետվություններ ներկայացնելու միջոցով:

10.2 Ցանցը և Ցանցի հիման վրա ստեղծված դիտորդական մարմինները չպետք է Ցանցի սեփականությունը, ինչպես նաև իրենց տնօրինմանը հանձնված նյութական արժեքներն օգտագործեն իրենց անձնական նպատակների համար:

II. ՑԱՆՑԻ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

11. Էթիկայի կանոնների պահպանման համար պատասխանատու է Ցանցի Էթիկայի Հանձնաժողովը:
12. Եթե Ցանցի անդամը չի կողմնորոշվում, թե ինչպիսի վարքագիծ դրսևորել որոշակի իրավիճակում, ապա նա պետք է դիմի Ցանցի Էթիկայի Հանձնաժողովին համապատասխան եզրակացության ստանալու համար: